

Ս. Էջմիածին, Ս. Ծնունդ 1987

Ամեն. Տ. Եղիշ Արհապ, Տէրտէրեան,
Պատրիարք Հայոց,
Երուսաղէմ

Սիրեցեալ Եղբայր Մեր,

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հոգեւնշումով յղում ենք Ձեզ մեծ աւետիսը մեր Փրկչի՝ Յիսուսի Քրիստոսի հրաւայի Ծննդեան ու Աստուածայայտութեան, աղօթքով սրտաբուխ որ Սուրբ Ծննդեան պատգամը՝ խաղաղութեան ու ի մարդիկ հանութեան, հզօրապէս հնչի մեր օրերի աշխարհի վրայ՝ բոլոր սաղմոսերգուի մարգարէութեան՝ «Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեցան, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեցին»:

Մեր աղօթքն է նաեւ որ խաղաղութեան մի աշխարհի երկնքի տակ, անվտանգ ու խաղաղ գոյատեւի եւ շինարար վերելք ապրի մեր մայր Եկեղեցին ու մեր հաւատարմութիւնը ի Հայաստան՝ ւ սփիւռք աշխարհի, կերտելով առաւել պայծառ իր ապագան, միշտ խանդավառ ու լաւատես, վերածնունդ մեր մայր հայրենիքի արդի ծաղկումով:

Մաղթում ենք ջերմապէս որ Տէրը անուսան պահի ձեր պատմական Սուրբ Աթոռը եւ Ձեզ պարգեւի քաջաոգիւթիւն՝ եղանակ հովուապետութեամբ, մեզապէս լուսառաս պահպանելով ձեր Եկեղեցիներն ու կրթական եւ մշակութային հաստատութիւնները:

Շնորհի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ եւ միշտ. Ամէն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Զ Գ Է Ն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Այս մատուցումով քեզի կ'աւանդեմ, Ժողովուրդ Հայոց, Յիսուսի ծննդեան աւետիսը: Շարունակեալ յաւերժի ծննդեան եւ մարդուն աստուածացումին: Մի ամպոսեր յոյսիդ պայծառութիւնը, որքան ալ դառն ըլլան օրերու բերումները եւ քրքերուդ մատուցած բաժակները: Մեզի հետ միասին այս գիշեր ձեր երկիւղած էութեան խորեւէն երգեցէ՛ք հայ երթորդին ծննդեան օրհնութեան սրտառու հրաւերը. «Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. որդի մարդկան օրհնեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ»: Այսպէս են երգեր դարեւով մեր ցեղէն անոնք՝ որոնց նայուածքը լեռներն ի վեր քալել է գիտցեր, թոթափելով իրենց հոգիներէն դարեւու ժանգն ու փոշին, բերելու համար մեզի այս գիշերուան Աստուածորդայն ծննդեան հաւատքը: Մայրացնենք մեր հոգին այս գիշերուան մեծ խորհուրդովը, նման մեր պապերուն, որոնք դարեւ բարունակ կաւէն ու հողէն վարդեր հանեցին, զեղումի երելով գիշերները եւ բանալով դռները երկնքին, իջեցնելով Աստուածորդին իրենց սրտերուն մէջ եւ մտքի գաղղ ընթանութեան:

19 Յունուար 1987